8 ապրիլի 2010 թվականի N 362 - Ա

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշմամբ հաստատված՝ ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի 4-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման աշխատանքների ընդունման նպատակով ստեղծել ընդունող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Ա. Սիմոնյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Ռ. Ալավերդյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ա. Բախշյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Զ. Գրիգորյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետ
Ս. Հայրապետյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության պետ - ՀՀ քաղաքաշինական պետական գլխավոր տեսուչ
Ա. Ղարիբյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության պետական հրդեհային տեսչության պետ - գլխավոր պետական տեսուչ
Հ. Հարությունյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչության պետ
Մ. Քամալյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետի տեղակալ

Ղ. Հակոբյան	- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության պետի տեղակալ
Ա. Ալբերտյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության վառելիքաէներգետիկ համալիրի ծրագրերի բաժնի պետ
Ս. Գլեչունց	- ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության վարչության էլեկտրոնային տեղեկատվական բաժնի պետ
Հ. Սարգսյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)
Հ. Հովհաննիսյան	- «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, նախագծի ղեկավար
Ս. Կ. Չո	- գլխավոր կապալառու «Միթսուի & Քո. ԼԹԴ. ԵՎ ՋՍ Էնջինիրինգ & Քոնսթրաքշն» կոնսորցիումի (Mitsui & Co. Ltd և GS Engineering & Construction Corp.) նախագծի ղեկավար, «ՋՍ Էնջինիրինգ & Քոնսթրաքշն» կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Կ. Յանագի	- գլխավոր կապալառու «Միթսուի & Քո. ԼԹԴ. ԵՎ ՋՍ Էնջինիրինգ & Քոնսթրաքշն» կոնսորցիումի (Mitsui & Co. Ltd և GS Engineering & Construction Corp.) ներկայացուցիչ, «Միթսուի & Քո. ԼԹԴ.» կազմակերպության մենեջեր (համաձայնությամբ)
Կ. Մորիկավա	- ծրագրի խորհրդատու, «ՏԵՊՍԿՈ» (TEPSCO) կազմակերպության նախագծի ղեկավար (համաձայնությամբ)

2. Ընդունող հանձնաժողովին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել աշխատանքների ընդունումը և հանձնաժողովի ակտը ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ հաստատման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. ապրիլի
Երևան